Էլմ. 472

1. Գեղեցիկ զգեստներ,
Գեղեցիկ երկինք վերն,
Գեղեցիկ տուն պայծառ,
Ուր չիք երբեք խավար,
Գեղեցիկ թագ փայլուն՝
Աստղերով նկարուն,
Գեղեցիկ բնագավառ,
Տե՛ր, մեզ հոն տար:

Զգեստ փայլուն, երկիր սիրուն,
Հոյակապ տուն ոսկեձեղուն,
Գեղեցիկ թագ, գողտրիկ նվագ,
Պալատներ լուսափառ,
Տեր, մեզ հոն տար:

2. Գեղեցիկ այս խորհուրդ,
Մենք՝ Իր սուրբ ժողովուրդ,
Փրկչին հետ հավիտյան
Պիտ ապրինք անբաժան,
Հոգե, վիշտե ազատ
Յուր ժառանգն հարազատ,
Կխնդրենք, Հայր արդար,
Մեզ շուտ հոն տար:

3. Գեղեցիկ ամեն ինչ
Փայլի հոն զերթ լույս ջինջ:
Կելլենք այս ձորեն խոր,
Հոն են մեր գանձն բոլոր,
Հարուցյալ Տերն վկա՝
Հոն երբեք մահ չկա,
Պիտ ապրինք դարեդար,
Տե՛ր, մեզ հոն տար: